« 06 » հուլիս 2022թ. No 2898 - Ա

«ՍԻՐՏ-ԹՈՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ: ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Էրեբունի բժշկական կենտրոն»՝ ԵՊԲՀ Հետբուհական և շարունակական կրթության կենտրոնի անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թեապիայի ամբիոն)

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

- Գրություն՝ 22.04-26.04
- Թիրախային լսարան՝ ավագ բուժաշխատողներ, բուժքույրեր, մանկաբարձներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի
- մասնակից ավագ բուժաշխատողներին շնորհել ՇՄԶ 3 տեսական և 14 գործնական կրեդիտ.

  մասնակից միջին բուժաշխատողներին շնորհել ՇՄԶ 2 տեսական և 11 գործնական կրեդիտ

  դասընթացավար Հասմիկ Քոչարյանին՝ ՇՄԶ 2 տեսական և 14 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010583101

Շաբաթ 1	
Օր 1	
10:00-12:30	**Գործնական աշխատանք** Նախնական գիտելիքների և հմտությունների գնահատում /նախաթեստ/, համայց ինտենսիվ թերապիայի բաժանմունքում(ԻԹԲ), անհետաձգելի բուժօգնության բաժանմունքում նրանց կառուցվածքը, հիգիենիկ նորմերը, սարքավորումները: Ոչ ռեանիմացիոն բաժանմունքներում սիրտ-թոքային վերակենդանացման և անհետաձգելի բուժօգնության իրականացման կազմակերպչական կանոնակարգերը և առանձնահատկությունները
12:30-13:00	Ընդմիջում
13:00-14:30	**Դասախոսություն** Մահ: Հասկացությունը, փուլերը, տեսակներն ըստ ծագման: Ուղեղի մահ: Հաստատագրման մեթոդները: Տարիքային խմբերը ՍԹՎ-ն տեսակետից: Չափահասների և երեխաների արտահիվանդանոցային և ներհիվանդանոցային գոյատևման շղթաները: 2020 ՍԹՎ ուղեցույցները, համեմատությունը նախորդ ուղեցույցների հետ
Օր 2	
10:00-11:30	**Դասախոսություն**

	Չափահասների ՍԹՎ կենսապահովման միջոցառումներ: Ցուցումները, հակացուցումները, դադարեցման ցուցումները, երկարատև ՍԹՎ-ի ցուցումները
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Տուժածի զննում և դեպքի վայրի անվտանգության ապահովում: Շտապ օգնության ահազանգում և ԱԱԴ ձեռքբերում: Անոթազարկի ստուգում: 30 սեղմում և 2 ներփչում շրջփուլերի մեկնարկ (ՍԹՎ): Կրծքավանդակի սեղմումների իրականացման տեխնիկան: Շնչուղիների անցանելիության ապահովման տարբերակները: Բերան-բերան, բերան-դիմակ, պարկ-դիմակ շնչառության տեխնիկան: Երկու փրկարարով չափահասների ՍԹՎ:
Օր 3	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Ավտոմատացված արտաքին դեֆիբրիլատորի կիրառման տեխնիկան չափահասների և 8 տարեկանից բարձր երեխաների մոտ: Երկու փրկարարով ՍԹՎ՝ ԱԱԴ-ի կիրառմամբ
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** 1 տարեկանից մինչև սեռահասունության տարիքի երեխաների 1 փրկարարով ՍԹՎ: Մեկ և երկու ձեռքով կրծքավանդակի սեղմման տեխնիկան: 2 փրկարարով երեխաների ՍԹՎ: Երեխաների արհեստական շնչառության իրականացման առանձնահատկությունները: 1 փրկարարով մանուկների ՍԹՎ: Երկու մատով կրծքավանդակի սեղմման տեխնիկան: 2 փրկարարով մանուկների ՍԹՎ: Երկու բութ մատով-ձեռքերով շրջանակած կրծքավանդակի սեղմման տեխնիկան: Մանուկների արհեստական շնչառության իրականացման առանձնահատկությունները
Օր 4	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** 1-8 տարեկան երեխաների մոտ ԱԱԴ-ի կիրառման առանձնահատկությունները: Ընդլայնված շնչուղիներով ՍԹՎ առանձնահատկությունները: Չափահասների, երեխաների և մանուկների փրկարար շնչառություն: Անաֆիլակտիկ շոկի դեպքում ՍԹՎ
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Օտար մարմնով շնչուղիների խցանման մեղմացում բոլոր տարիքային խմբերում: Ջրահեղձում՝ ՍԹՎ: Հղիների հիմնական կենսապահովման առանձնահատկությունները: Նարկոտիկ-անալգետիկներով թունավորման դեպքում ՍԹՎ
Օր 5	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Մահվան տարբեր դեպքերի և իրավիճակների քննարկում, ՍԹՎ հիմնական կենսապահովման գործողությունների իրականացում մասնավոր իրավիճակներում
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	Հիմնական կենսապահովման միջոցառումների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատում: Ավարտական թեստավորում: Թեստերի վերլուծություն

Դասընթացավար՝ Հասմիկ Քոչարյանին